Սիպիլ

Ժամանակի՞ն

Դուն զոր շատեր ուրացան,
Աստվածներու կարգ դասեցին շատերն ալ,
Անջրպետին չորրորդ ծավալն է, ըսին
Մեծ գիտուններ բազմաձայն:

Այլ ո՞վ երբեք չափեց քեզ,
Ո՞վ թափանցեց գաղտնիքներուդ քու ամբավ,
Մշտաթավալ քու սրարշավ կամքիդ վեսս
Ո՞վ երբեք անցքը տեսավ:

Հսկա ծառեր գոսացան,
Փըշուր փըշուր ինկան խըրոխտ, սեգ սեռներ,
Ահեղ պորմեր ու տաճարներ փոսացան.
Դուն անսասան կ՚ապրիս դեռ:

Անգույն, անծիր ու անձայն,
Ծայրածավալ ունայնություն համագրավ,
Ոչինչ մը չես, էակ մ՚ալ չես, անբաժան
Իսկությո՞ւն մ՚ես դուն, իրա՞վ:

Խոստումներով բոլոր սուտ՝
Տառապողին համար կեցած անխըլիրտ.
Գոհ սիրտերու համար կ՚անցնիս որքա՞ն շուտ,

Անանց հետքեր թողլով բիրտ:

Օրե՞նք մ՚ունիս արդյոք դուն,
Թե օրենքըդ անհեթեթ կամքն է անբավ,
Եվ կ՚անսաստենք երբ խոլ կամքիդ տառերուն,
Մեզ կը պատմես անխափան:

Այդ ուժն ահեղ գըտար ո՞ւր,
Ո՞վ դատավոր կարգեց ըզքեզ մեր վըրա,
Ո՞վ քեզ տըվավ երկաթեն կուռ, սուրեն սուր,
Իշխանության գավազան:

Եթե անզոր չըլլար մարդ,
Եվ կամ ըլլար գոնե նըվազ անարի,
Արդյեք քեզ դեմ չէ՞ր հոչակեր մահ ու մարտ
Բանակներով վիթխարի:

Մա՛րտ, ի՞նչ զենքով, անանուն
Անէություն քեզ դեմ, ոսին ուրվակա՛ն,
Հերոսներու, հանճարներու վեհագույն
Համայնակուլ գերեզման:

Ո՞ր շանթ, ամպրոպ բազմաբոց
Երկինքներու, աշխարհներու քենն ու վրեժ
Ըզքեզ անեծքն աստվածներու և մարդոց
Կրցան ընել գահավեժ

Դուն ապրեցար մընացիր
Որ ծովերը ցամքին, հատնին կյանքերն ալ,
Որ աստղերը մարին, իյնան ցան ու ցիր
Խոր փոսերուն մեջ մըռայլ:

. . . . . .

Անհունին մեջ տարուբեր՝
Միտքս անզոր է պայքարելու քեզի դեմ.
Այլ քեզմե խոր, քեզմե անհուն, քեզմե վեր
Հոգվույս ուժը ես գիտեմ:

Ան է միայն որ ազատ,
Պիտի սլանա անցնի դարերն ապագա,
Թափանցելով խորհուրդներու միգապատ,
Պիտի տիրե անոնց վրա:

1931